կարացին վճարել զվեհս իւրեանց 'ի մէջ ազգին, ժամ եդին բողոքել յատեան Եպարքոսին և անդ դատիլ։ Իրրեւ յանդիման եղեն մեծի ատենին երկոքեան, հարցին ատենակալքն. Գալուստ վարդապետ յառաջեալ քան զՄինաս, սկիզբն կալաւ պատմել. այրս այս յանիրաւի յափշտակեալ յինէն զիշխանութիւն Պատրիարքութեան, եւ իրրեւ կամէր զանձն արդարացուցանել եւ վնասապարտ ցուցանել զՄինաս, ամենապարեալ նորա ընդհատեաց զբանն, և յայտնի կացոյց առաջի ատենին զբազմադիմի վնասս և դէպրութիւնս նորա, զոր էած 'ի վերայ ազգին և վանաց Ս. Յակոբայ յառաջ բերեալ զգիրս դանկատանաց ժողովրդեան և դատաւորին Երուսաղէմի, և թէ ո՞րպէս ժողովեալ ըզնուէրս ազգին, եկեր և վատնեաց 'ի կամս իւր. ընտրութեամբ և հաճութեամբ ազգին եւ հրովարտակաւ Արքային լեալ էր ինքն Պատրիարք Երուսաղէմի։ Գալուստ վարդապետ ոչ կարացեալ առնել պատասխանի բանից Մինասս վարդապետի՝ պարտաւորեալ եղ յատենէ անտի։

Եւ Մինաս վարդապետ վերստին խնդրեաց հրովարտակ, զի մի ոք նեղեսցէ զինքն վասն բանի Պատրիարքութեան, և մնալ հաստատուն յիշխանութեանն մինչ ցվախճան իւր։ Գրեցաւ հրովարտակ հրամանաւ Արքային, և առեալ զայն Մինասայ դարձ արար յԵրուսաղէմ յԱթոռ իւր, ՌՌՌ (1699)։

Մինաս վարդապետ 'ի նախընթաց ամին (1698) երաց զարտաքին դուռն Ս. Հրեշտակապետի վանաց 'ի կողմն հիւսիսոյ և նոր շինեաց զայն. նորոգեաց զքանի մի տեղիս Ս. Փրկչի վանաց, զի զորքն իջեալ 'ի վերուստ աւերեալ էին։

Ոմանք յայլազգեաց Երուսաղէմի գնացեալ 'ի Կոստանդինուպոլիս՝ չարախօսութեամբ ամբաստան եղեն զվանորէից քրիստոնեայ ազգաց, և առին հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի գրեալ 'ի Սեպտեմբեր ամսոյ, ՌՌՌ. (1698) իբր թէ Հայք, Յոյնք և Լատինք յԵրուսաղէմ գնեալ իցեն տունս յայլազգեաց մերձ 'ի պարիսպ քաղաքին, զոմանս արարեալ իցեն պարտէզ եւ զայլս շինեալ նոր տունս 'ի բնակութիւն։ Ասա հրամայէ քննել զայնոսիկ՝ եթէ այնպէս իցէ, որպէս ամբաստանիցին՝ քակեալ կործանեսցին